# Գարեգին Նժդեհի կյանքի անհայտ էջերը

«Ես երբեք չեմ օգտվել արտաքին ուժերից, անգամ հարազատ պետության միջոցներից: Առաջնորդվել եմ Մամիկոնյանների ուխտով: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու եւ մեռնելու նրա համար»: Իր «Ինքնակենսագրության» մեջ գրել է Գարեգին Նժդեհը: Նրա կենսագրության անհայտ էջերը նորովի վերանայելով՝ Ռաֆայել Համբարձումյանը կազմել է «Գարեգին Նժդեհ» գիրքը, որը լույս է տեսել Արցախի թեմի առաջնորդարանի հովանավորությամբ: Գրքի «Համառոտ կենսագրական», «Ասույթներ» եւ «Կենսամատենագրություն» բաժիններից ամեն մեկը յուրովի է բացահայտում մեծ հայրենատերի ու ռազմական գործչի անձնային էությունն ու ինքնատիպ մտածողությունը, որ բխում են ազգային գաղափարախոսության ակունքներից ու դառնում իրական կենսակերպ ու գործելաոճ:




Նժդեհի մտքերն այնքան արդիական են, ասես գրված են բոլոր ժամանակների համար, ուսանելի են ողջ հայությանը:

«Հայը Հայաստանից դուրս ենթակա է վատասերումի: Այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինության եւ սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումով, մի բան, որ հիմնավորեցի ու անվանեցի ցեղակրոնություն: Դրա նպատակն է՝ անհայրենիք հայությանը հոգեւոր ու քաղաքական անտուն- անտիրությունից փրկելով, դարձնել հայրենատեր: Դա հայրենասիրական շարժում է, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանան հայության բոլոր հատվածները», այս խոսքերը միանշանակորեն համահունչ են նաեւ մեր օրերին:

Գրքի հեղինակն ամենայն հոգածությամբ ընթերցողին է հաղորդում Նժդեհի կյանքի ու գործունեության պատմությունը, վեր հանելով հայ ազատագրական պայքարում նրա անգնահատելի դերն ու խիզախումները, նաեւ կրած մեծագույն դառնությունները: Նժդեհին դասելով 20-րդ դարի հռետորական արվեստի մեծագույն դեմքերի շարքը, հեղինակը նշում է, որ նրա ռազմական ու քաղաքական տաղանդը պայմանավորված էր նաեւ հռետորական արտասովոր կարողությամբ, որով էլ նա ոգի էր ներշնչում զինվորներին՝ առաջնորդելով ամենաանիրագործելի թվացող սխրանքների: Խոշտանգումներով լի կյանքի վերջին 11 տարիները, որ ինչպես ինքն է գրել, «ողջ-ողջ թաղված, պատի մեջ շարված-զնդանված է եղել», անցան բանտարկության մեջ, սակայն չընկճեցին նրան, չքուլացրին նրա հայրենատեր հոգին:

Հեղինակի համոզմամբ, Նժդեհի բանտարկված լինելու հանգամանքը պատճառ է դարձել նրա աշխատությունների նենգափոխմանն ու սխալ մեկնաբանումներին նաեւ մեր օրերում: Նրա ցեղակրոնությունը հաճախ հակադրվել է քրիստոնեությանը, որն, ըստ հեղինակի, կատարյալ անհեթեթություն է:

Ռաֆայել Համբարձումյանի գրքում առաջին անգամ ներկայացվում են Նժդեհի անգլերեն կենսագրականն ու կենսամատենագրությունը: Կենսագրականը թարգմանել է «Ազգ» օրաթերթի աշխատակից Հակոբ Ծուլիկյանը, որի կատարած անթերի աշխատանքը մեկ անգամ եւս փաստում է անգլերենի նրա փայլուն իմացությունն ու վարպետությունը: Առաջին անգամ են տպագրվում նաեւ Նժդեհի մի քանի նորահայտ լուսանկարները:

Նժդեհին վերստին փառաբանելու հեղինակի մեծ նվիրումը արժանի է դրվատանքի, քանզի նժդեհագիտությունը դեռ շատ խոսք ունի ասելու մեր նորանկախ պետության ապագա կերտողներին:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Ջահուկյանի «Լեզվի ընդհանուր տեսությունը» անգլերեն

Եթե հայ մեծանուն լեզվաբանների ու մյուս գիտնականների գործերը խորհրդային տարիներին թարգմանվում էին ռուսերեն ու ռուսալեզու ընթերցողների սեփականությունը դառնալով կրկնակի արժեւորվում, ապա [illegible]

ԳԱԱ ակադեմիկոս Գեւորգ Ջահուկյանի «Լեզվի ընդհանուր տեսություն» մենագրությունն [illegible] Դորա Սաքայանը: [illegible]

[illegible]

Նրա աշխատանքը բարձր գնահատեցին ԵՊՀ պրոֆեսորներ [illegible]

[illegible]

Ս. Պ.

# Վաղվա հայի ու Հայաստանի համար

Այսպես է եղել. հայ մարդը [illegible]

Այսպես է նաեւ [illegible] Սամվել Գեւորգյանի անվան թիվ 189 դպրոցին: Այսպես է տոնական օրերին (սեպտեմբերի 1-ին եւ Ռուսաց լեզվի օրը) [illegible]

[illegible] թիվ 189 դպրոցը [illegible]

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՍՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

# Անմեռության հնարավորությունը

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՎ

Երիտասարդ ստեղծագործողի գրական [illegible]

Արձակագրի համար [illegible] Հրաչյա Սարիբեկյանի առաջին գիրքը ընթերցելիս: «Գուշակություններ հայելիներով» ժողովածուի («Զանգակ» հրատ. 2003 թ., 75 էջ) [illegible]

[illegible]

20-րդ դարավերջյան փիլիսոփայական որոշ ուղղությունների, մասնավորապես էգզիստենցիալիզմի, [illegible] Հրաչյա Սարիբեկյանի [illegible] «Մեծ ապագա»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 80-ամյակին

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի կյանքն [illegible] Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 80-ամյակին նվիրված [illegible]

Ինչպես իր ելույթում նշեց [illegible] Դավիթ Գասպարյանը, [illegible] Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 80-ամյակը նշվում է նաեւ Ազգային գրադարանում, [illegible]

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



